ՐԱՖՖԻ

Հարեմ

1 - ԺԱ, ԺԲ

Քաղաքի խուլ և խեղդված թաղերից մեկի անկյունում, կեցած էր մենավոր տուն, որ ագռավի բույնի նման տխրությամբ նայում էր խոր խրամատի վրա, որով շրջապատած էր ամբողջ քաղաքը: Գիշերվա մթության մեջ ոչ ոք չէ համարձակվի մոտենալ այդ փոքրիկ տնակին, որն արտաքուստ թեև կրում էր ողորմելի կերպարանք, այսուամենայնիվ միշտ սարսափ էր ձգում յուր շրջակայքի վրա:

Այդ տնակն ոչ սակավ անգամ եղած էր տեսարան զարհուրելի չարագործությունների...

Նա բաղկացած էր մի քանի սենյակներից, որոնք ոլոր-մոլոր մուտքերով բացվում էին միմյանց մեջ: Այդ սենյակներից մեկի մեջ միայնակ նստած էր մանկահասակ կին: Նեղ բակի չինարի ծառերին փաթաթված խաղողենիները, հովանավորում էին նրա լուսամուտները նույն ժամուն արևի այրող ճառագայթներից:

Կինը տխուր-հուսահատական ձայնով նանիկ էր կարդում յուր մանուկին, որը, մոր կրծքին կպած, անհագ կերպով ծծում էր յուր սնունդը նրա ստինքից, և երբեմն ժպտելով լուր լուսափայլ աչքերը դարձնում էր մոր երեսին, կարծես, նրանցով աշխատում էր ցույց տալ, թե նա արդեն զո՛հ էր յուր վիճակից: Բայց ո՞րքան հույս և կյանք էր տեսնում այն պարզ և անմեղ աչքիկներում քնքուշ մայրը...

Այդ կինն յուր միջին հասակումն էր՝ լղարիկ և ցամաք կազմվածքով: Բայց նրա վշտահար դեմքը կրում էր յուր վրա տխրության բոլոր գծերը: Նրա նշաձև սևորակ աչքերը՝ խիտ թերթերունքներով, որոնց մեջ կար այնքան կյանք և կիրք, նվաղած էին: Երևում էր, որ նրանք շատ անգամ վկա էին եղել ցավալի տեսարանների և արտասուքը խիստ հազիվ ցամաքել էր նրանց միջից...

Դռան թխկոցը խլեց մոր ուշադրությունը յուր սիրելի մանուկից: Նա դրեց տղան օրորոցի մեջ: Երեխայի փոքրիկ մատիկները սկսան զբաղվիլ յուր օթյակի դաստակից քարշ ընկած խաղալիքների հետ: Մայրը վազեց դեպի դուռը: Աստված տար, որ «նա» լիներ, ասաց յուր մտքի մեջ:

Ո՞վ եք, հարցրուց ներսից:

Աստծո հյուրեր, լսելի եղավ դրսից:

Դուռը բացվեցավ: Տանտիրուհու առջև հայտնվեցան երկու դիմակավորված կանայք: Նրանցից մեկի արտաքին օտարոտի կերպարանքն յուր վրա դարձրուց նրա ուշադրությունը: Նա նմանում էր բոշա մուրացկանի, որ կարծես եկել է մի բան խնդրելու: Այդ միտքն առիթ տվեց տանտիկնոջը հանել յուր գրպանից մի քանի սև փող, որն առաջարկելով բոշային, ասաց.

Ա՛ռ այդ արծաթը, ավելին աստված տա:

Մենք չենք եկել ողորմություն խնդրելու, ասաց բոշային նմանող կինը. միայն թե կարելի է մի քանի րոպե մեզ հանգստություն շնորհեցեք ձեր տան ծածկի տակ, մինչև տոթը կանցներ, մենք հեռու ճանապարհից ենք գալիս:

Հրամեցեք, ասաց տանտիկինը, ներս հրավիրելով:

Հյուրերը ներս մտան: Դուռը կրկին կողպվեցավ: Նրանք անցան սենյակը, բայց եկվորներից և ոչ մինը տակավին չէր բարձրացրել երեսից դիմակը:

Այստեղ դուք մինակ ե՞ք, հարցրուց բոշային նմանող կինը:

Այստեղ ես եմ և իմ տղան, իսկ մյուս սենյակում պառկած է մի հիվանդ:

Մի հիվա՞նդ, կրկնեց եկվորը: Նա արգելք չէ՞ կարող լինել մեզ:

Նա վիրավորված է, շարժվել անգամ անկարելի է նրան:

Եկվորները բարձրացրին դիմակները: Երկու պատկեր, մինը՝ գեղեցիկ որպես բոլորված լուսնյակ, մյուսը՝ սևուկ բոված դահվեի գունով, երևան եղան տանտիկնոջ աչքին: Նրա հիացմունքն ավելի սաստկացավ, երբ նրանք ձգեցին յուրյանց հնոտի չարսավները: Գեղեցիկ կինը զուգված էր բոլոր այն շքեղություններով, որով արևելքը գիտե զարգարել յուր սիրո առարկաները:

Ռոպեական ապշությունից հետո, շփոթված տանտիկինը՝ գեղեցկուհուն վրա ընկավ, գրկեց նրան, «Ալմաստ» անունը թռավ նրա բերնից, և թուլացած, անմռունչ մնաց յուր հյուրի կուրծքի վրա...:

Դա Զեյնաբ-խանումն էր, իսկ նրա ընկերուհին՝ Մարջանը:

Դու ճանաչեցիր ինձ, Սալոմե, ասաց նա, չթողնելով յար վաղեմի բարեկամին գրկիցը:

Իմ աչքերը պետք է կույր լինեին, որ չճանաչեին քեզ, Ալմաստ: Ա՛խ, աստված, ի՛նչպես մենք կրկին տեսանք մեկ-մեկու:

Երկար երկու ընկերուհիներն, որպես մի զույգ հարազատ քույրեր, չէին դադարում միմյանց գրկելուց, միմյանց համբուրելուց և մեկ-մեկու վրա նայելուց: Ուրախության բորբոքումը թաց արեց երկուսի էլ աչքերը արտասուքով:

Մարջանը լռությամբ նայում էր այդ հոգեշարժ տեսարանին: Երբ նրանք բաժանվեցան, նա մոտեցավ յուր տիկնոջը, հարցնելով.

Ձեր աղախինն այժմ կարո՞ղ է գնալ:

Գնա՛, Մարջան, պատասխանեց Զեյնաբ-խանումը, անցի՛ր «նրա» մոտ, ասա՛ որ ես այստեղ եմ: Հետո ամրոցը կերթաս, այնտեղ քո գործը դու ինքդ լավ ես իմանում...

Խափշիկը գլուխ տալով կամենում էր հեռանալ, երբ Սալոմեն հարցրուց.

Դա քո աղախի՞նն է, Մարջա՛ն, ի՛նչ գեղեցիկ անուն է:

Իմ հավատարիմն է, ճանաչի՛ր, Սալոմե, այսուհետև դրա հետ գործ շատ կունենաս:

Ե՛կ համբուրեմ քեզ, դու իմ ընկերուհուս բարեկամն ես, ասաց Սալոմեն գրկելով Մարջանին: Թո՛ղ չգնա այդպես շուտ, դարձավ նա դեպի Զեյնաբ-խանումը, մի փոքր սառը միրգ ուտե, սիրտը հովացնե, արեգակն այրում է դրսումը:

Կուշանա, Սալոմե, պատասխանեց աղախնի տիրուհին:

Թող խմե գոնյա մի փոքր ցուրտ շերբեթ, Սալոմեն դուրս եկավ սենյակից քանի րոպեից հետո նա դարձավ մի մեծ գավաթ ձեռքին, որ լիքն էր շաքարով և նարնջի ջրով շինած ըմպելիքով: Գավաթի մակերևույթի վրա լող էր տալիս մի կտոր սառուց:

Խափշիկը ծծեց գավաթը մինչև հատակը, և շնորհակալություն անելով հեռացավ:

Հիմա նստենք, իմ սիրեկան, դարձավ Սալոմեն դեպի յուր հյուրը: Նստենք ու խոսենք: Ա՛խ ի՛նչքան խոսելու բաներ ունենք... Շա՞տ.. որքան ասես, շա՛տ... պատասխանեց Զեյնաբ-խանումը տխրալի ձայնով: Բայց միևնույն րոպեին նրա աչքն ընկավ օրորոցին: Այդ քո երեխա՞ն է, ի՛նչ սիրուն երեխա է, շատ նման է քեզ, Սալոմե:

Եվ նա մոտեցավ սկսավ համբուրել տղեկի լիքը թշերը:

Դու դեռ երեխա չունե՞ս, Ալմաստ:

Չունեմ, Սալոմե, և չէի ցանկանա ունենալ:

Ինչո՞ւ:

Մենք ախա՛ր քրիստոնյա ենք, Սալոմե, բայց մեր որդիքն այստեղ պարսիկներ կծնվեին:

Այդ ուղիղ է, իմ սիրեկան, պատասխանեց Սալոմեն հոգոց հանելով: Դե՛ նստի՛ր, Ալմաստ, ինչո՞ւ չես նստում, դու ինձ անհանգիստ ես երևում:

Ես սպասում եմ Քերիմ-բեկին:

Ինչո՞ւ չես ասում Մեխակին: Միթե նա գալո՞ւ է այստեղ:

Գալու է: Մարջանը գնաց նրան իմացում տա:

Երկու վաղեմի ընկերուհիները նստեցին միմյանց մոտ մի խալիչայի վրա, որ փռած էր լուսամուտի հանդեպ, որ բացված էր դեպի կանաչազարդ բակը:

Դու ի՞նչպես գտար Մեխակին, Ալմաստ ջան, հարցրուց Սալոմեն, ա՜խ, ես որպես ուրախ եմ, որ դուք էլի ռաստ եկաք մեկ-մեկու:

Նա ինձ գտավ, Սալոմե ջան, պատասխանեց Զեյնաբ-խանումը:

Եվ տիկինը պատմեց՝ ամառանոցի այգու դեպքից սկսած մինչև «կախարդի» երևալն ամրոցում: Մարջանի այդ խորամանկությունը մինչև այն աստիճան շարժեց Սալոմեի ծիծաղն, որ նրա աչքերը բոլորովին թաց ելան արտասուքով:

Էդ լա՜վ բան եք սարքի... ընդհատեց նա յուր ընկերուհու պատմությունը:

Ի՛նչ անենք, Սալոմե ջան, «կատվի բերանն երբ մսին չէ հասնում, սկսում է գողություն անել»:

Էդ լա՜վ է, շատ լա՜վ եք մոգոնի... կրկնեց Սալոմեն չդադարելով ծիծաղելուց: Ա՜խ: ես մոռացա քեզ համար ղեյլան պատրաստել, խոսքը փոխեց նա վեր թռչելով նստած տեղիցը:

Նա անցավ նախասենյակը:

«Խե՜ղճ Սալոմե, ասաց Զեյնաբ-խանումն յուր մտքի մեջ, ո՛րքան փոխվել է նա... ո՜րքան մաշվել է նա»...

Սալոմեն ներս բերավ ղեյլանը, տվեց յուր հյուրին: Նրանք սկսեցին ծխել:

Հիմա էս ղեյլանով ու էս շորերով, Ալմաստ ջան, ես ու դու Թիֆլիսում նստած ըլեինք ձեր դռանը՝ Տափի-թաղում, ա՜խ, ի՛նչքան կծիծաղեին մեր թաղի աղջիկները:

Էլ չենք տեսնի ոչ Թիֆլիսը և ոչ Սոլոլակը, Սալոմե ջան... Մի՞տդ է գալիս, որ կիրակիները գնում էինք խեվումը բուրթի (գնդակ) էինք խաղում: Ո՜ւր է էն օրերը...: Կեկելի աղջիկը՝ Սոփոն, հիշո՞ւմ ես, Սալոմե, ի՛նչ լավ էր խաղում էն ծամ կտրածը:

Հայրենիքի հիշողությունները ցավալի տպավորություն ունեցան երկու գերիների վրա ևս: Եվ նրանք երկուսն էլ չկարողացան զսպել յուրյանց արտասուքը:

Իմ մասին բոլորը լսած կլինես Քերիմ-բեկից, պատմիր, Սալոմե ջան, դու ի՛նչպես ընկար այստեղ:

Լավ է, որ չիմանաս, Ալմաստ ջան:

Չէ՞, քո հոգուն մատաղ, ես ուզում եմ գիտենալ:

Սալոմեն սկսեց պատմել:

Երբ Մահմադ-խանի սարվազները լցվան մեր քաղաքը, հերս տանը չէր, նա գնացել էր Կախեթ գինի բերելու: Տան մեջ մնացել էինք ես, մերս, մեկ էլ իմ աղբեր Սոսիկոն: Միտդ գալի՞ս է, Ալմաստ, էն պստիկ երեխեն, որ ջեր ծիծ էր ծծում: Հանկարծ ողջ քաղաքը ծուխի մեջ կորավ, լաց ու շիվանը բարձրացավ և ամեն կողմից խաբար դուրս եկավ, թե քաղաքը թալանում են, աղջիկները ու ջեհիլ տղերքը գերի են տանում: Մայրս ինձ թաքցրուց մեր սարդափումն ու ինքը նստավ դռանը: Մեկ էլ տեսանք, երկու պարսիկ մտան մեր բակը: Մորս լեզուն կապվեցավ: Նրանք սկսան մեր տունը կողոպտել, ինչ լավ բան որ գտան՝ արծաթեղեն, պղնձեղեն՝ ամենը լեցրին իրանց խուրջիններում: Հետո մորս

սկսեցին տանջել թե պահած փող կունենա, հանե տա: Խեղճ մայրս աղաչում էր, լաց էր լինում, բոլոր սուրբերի անունով երդում էր ուտում, թե փող չունի: Նրանք չէին հավատում: հետո Սոսիկոյին խլեցին մորս գրկիցը: «Տես էդ երեխիդ կմորթենք, թե փողերի տեղը ցույց չտաս»: Մերս էլի սկսեց աղաչել, որ երեխին ձեռը չտան: «Աստված է վկա, ասում էր, մենք աղքատ ենք, փող չունենք»: «Դու խաբում ես, անզգամ, գոռաց մինը, տե՛ս»: Ու էդ խոսքի հետ Սոսիկոյին զարկեց գետինը: Խեղճ երեխի գլուխը դիպավ քարին, մի ծպտուն էլ չհանեց, հոգին տվավ: Մայրս հենց էս որ տեսավ, ուշքից գնաց, վեր ընկավ: Անողորմները տեսան նրա մատների մատանիներն, ուզեցին հանել, բայց դժվար էին դուրս գալիս: Նրանցից մինը խանջարը հանեց և մատները կտրեց: Ա՛խ, ինչպիսի սարսափով էդ բոլորը տեսնում էի ես սարդափի պատուհանիցը...

Զեյնաբ-խանումը խորին տխրությամբ լսում էր այդ բոլորը, սրտի կրակիցը կարծես ցամաքել էին աչքերի արտասուքը: Սալոմեի պատմությունը հիշեցնում էր նրան այն անբախտ դեպքն, որին ինքն էլ վիճակակից էր: Նա ընդհատեց նրա խոսքը, հարցնելով.

Բա՛, դու ի՞նչպես ընկար նրանց ձեռքում:

Հետո նրանց աչքն ընկավ սարդափի դռանը: «Էստեղ մի բան կըլնի թաքցրած», ասացին մեկ-մեկու: Սարդափի դուռը կոտորելն ու ներս մտնելն մեկ րոպեի գործ եղավ: «Ա՛յ, դանջըդ, տես ո՛րտեղ է մտել», ասացին ու ինձ դուրս քաշեցին: Ես ոչինչ չհասկացա, թե ինչ պատահեց ինձ հետ, ո՞ւր տարան ինձ, բայց հենց որ ուշքի եկա, տեսա, որ ես կապված եմ մի էշի վրա և գտնվում եմ գերիների ահագին քարավանի մեջ: Հիմա էլ մարմինս սարսռում է, մազերս փուշ-փուշ են դառնում, երբ միտս եմ բերում էն ցավալի րոպեն: Ես տեսա, սիրուն աղջիկներն ու տղերքը, որ ղոշունի (գորքի) աստիճանավորներին էին պատկանում, կապված էին ուղտերի և ձիաների վրա, բայց հասարակ սարվազների գերիները բոբլիկ ոտքով, ամեն մի զինվոր թոկը նրանց թևքերիցը կապած, քարշ էր տալիս յուր ետևից: Բայց իրանց չորքոտանիների վրա նրանք բարձեք էին այն թալանը, որ կողոպտել էին մեր քաղաքից: Գերիների լացը, սուգը, նրանց ողորմելի աղաղակը, սարվազների անգութ շալլախի (մտրակի) ձայնն, այդ բոլորը խառնվում էին գրաստների հարա-հրոցի հետ:

Բայց ի՞նչպես ես չտեսա քեզ, Սալոմե:

Դու շատ բան չտեսար, սիրելի Ալմաստ, դու բախտավոր Էիր մեզանից: Քեզ տանում էին մի ջորու վրա կապած քաջաֆեի (պատգարակի) մեջ: Որովհետև դու գնդապետի դերին էիր:

Մին էլ, մենք անցանք հետևակ զորքից մի քանի օրով առաջ:

Էդպես է, իմ սիրեկան, հառաջ տարավ Սալոմեն յուր պատմությունը: Երբ գիշերը վրա հասավ (էդ առաջին գիշերն էր, որ մենք դուրս էինք եկել քաղաքից) ղոշունը իջևանեց մեկ նեղ դաշտի մեջ, որ մոտ էր Քոի ափին ու մեկ կողմը սարեր կային: Ի՞նչ սարսափելի գիշեր էր այն...: Երբ մութը պատեց, երբ զինվորների կրակները վառվեցան, ամեն ձորի միջից, ամեն քարի տակից, ամեն թուփի միջից լսվում էին ողորմելի ձայներ: Դրանք անմեղ կույսերի մրմունջներն էին, որոնց անողորմ գազանները բաժանում էին իրանց մեջ: Հերթը հասավ ինձ: Դու հիշո՞ւմ ես, Ալմաստ, որ ես ասեցի, թե ինձ գերի անողներն երկու հոգի էին: Նրանց մեջ վեճ բացվեցավ իմ մասին ու վճռեցին իմ վրա վիճակ ձգել: Վիճակը դուրս եկավ նրան, որ սպանեց Սոսիկոյին ու մորս մատները կտրեց: Ա՜խ, որքան ատում էի ես այդ գազանին: Բայց էն մյուսն, որ ավելի բարեսիրտ էր երևում, չբավականացավ վիճակով: Նրանց մեջ սկսվեց կռիվը: Խենջարները շողացին, իմ ատելին գլորվեցավ գետին: Ես մնացի զոհ մեկէլին: Դա իմ այժմյան ամուսինն է, սիրելի Ալմաստ:

Քո այժմյան ամուսինը, կրկնեց Զեյնաբ-խանումը շփոթվելով:

Այո՛, պատասխանեց Սալոմեն տխուր ձայնով:

Ի՞նչով է պարապվում:

Նա ավազակ է:

Զեյնաբ-խանումը սոսկաց, նրա ամբողջ մարմնի մեջ դող ընկավ:

Ավազա՛կ... անբա՛խտ Սալոմե, ուրեմն դու ավազակի կին ես և ես այս բոպեիս ավազակի տան մեջն եմ... Սալոմեն սկսեց հանգստացնել նրան ասելով.

Մի վախիր, Ալմաստ ջան, այդ տնակն, որ միշտ վառոդի հոտ է փչում, ավելի ապահով է քան մեծ մուշտեիդի ապարանքը, ուր միշտ ղորանի ձայնն է լսվում:

Բայց դու ասեցիր նա ավազակ է:

Այո, ավազակ է, նա սպանում է, կողոպտում է, նա այս րոպեիս էլ գնացել է յուր որսն որսալու: Բայց երբեք նա աղքատի հացը չէ խլել և խեղճի աչքերից արտասուք չէ քամել: Եվ դու սիրո՞ւմ ես նրան:

Սիրում եմ, Ալմաստ ջան, որովհետև նա իմ աչքի առջև մորթեց այն գազանին, որ սպանեց իմ եղբայրը և կտրեց մորս մատները:

Զեյնաբ-խանումը տակավին մտատանջության մեջ էր: Նա երևակայել անգամ չէր կարողանում, թե մի ավազակ կարող էր լավ հատկություններ ունենալ: Իսկ Սալոմեն բոլորովին դուրս բերավ նրան այդ երկբայությունից:

Նա յուրյան ապաստանած կնկան քույր է կոչում, Ալմաստ ջան, իսկ յուր ձեռքը բռնող թշնամուն-եղբայր: Նա յուր սուրը և ձեռքը չէ խնայում օգնել նրանց, ովքեր ապավինում են նրան:

Այդ խոսքերի միջոցին մերձակա սենյակից լսելի եղավ. «ջո՛ւր, այրվում եմ»...

Խեղճը ծարավ է, ասաց Սալոմեն և վազեց դուրս:

Երբ նա դարձավ, Զեյնաբ-խանումը հարցրուց.

Ո՞վ է նա:

Ամուսնիս ընկերներից մինն, ողորմելին սաստիկ վերք է ստացած գլխից և կուրծքիցը:

Դռան ձայնը լսվեց: Սալոմեն գնաց բաց արավ:

Հայտնվեցավ Քերիմ-բեկը:

ԺԲ

Նույն ավուր երեկոյան պահուն, երբ արեգակը տակավին յուր վերջին ճառագայթները խաղացնում էր Դեմավենդի գագաթի վրա, Շահ-Աբդուլահիզմի դերվազեից ներս մտան մի խումբ հրացաններով և նիզակներով զինվորված ձիավորներ: Լղարիկ բարակները, լայնականջյա գամփռները, փոքրիկ կատվանման թուլաները, հոգնած լեզուները քարշ գցած, վազ էին տալիս նրանց առջև: Բազեները, որոնք անհոգ կերպով նստած էին ձիավորների ձեռքի վրա, ցույց էին տալիս, թե այդ հեծելախումբը դառնում էր որսորդությունից: Եվ հիրավի, զանազան թռչուններով լիքը արյունոտ տոպրակները և մի եղջերու, որ բեռնած էր ջորու վրա, հաստատում էր այդ կարծիքը: Փոշին թանձր այուներով բարձրանում Էր այն փողոցներից, որտեղից անցնում էին նրանք: Նստած մարդիկը կանգնում էին և նրանց գլուխ էին տալիս: Անցորդը հետ էր քաշվում, կանգնեցնում էր յուր գրաստը և ճանապարհ էր բաց անում, իսկ կանայքը թաքնվում էին անկյուններում: Դա Զեյնաբ-խանումի ամուսինն էր յուր ծառաներով: Նա մի մարդ էր մոտ հիսուն տարեկան, հաստլիկ, հինայով ներկած երկայն մորուքով և ահեղ կերպարանքով: Իշխանը բռնած էր նույն ժամանակ շահի դռանը մի մեծ պաշտոնակալի տեղ:

Նա հասավ յուր ամրոցն, երբ ճրագները վառվել էին արդեն, իսկույն վայր իջավ ձիուց և սանձը հանձներ դռան պահապաններից մինին, որոնք խումբով վազեցին նրա առջև: Նրա նժույգը պատած էր սապոնի նման փրփրած քրտինքի մեջ, սկսան ման ածել նրան մինչև հովանա: Իշխանը ներս մտավ յուր դիվանխանան: Մանկահասակ պատանյակներն, անմազ թշերով, պատեցին նրա շուրջը. մինը սկսավ յուր տիրոջ կոշիկները դուրս քաշել, մյուսը նրա զենքերն էր արձակում, երրորդը լագան աֆտաֆին գրավ նրա առջև, որ լվացվի: Երբ նա մաքրեց յուրյան ճանապարհի փոշուց, իսկույն մատուցին վարդաջուր, նա սրսկեց յուր փառավոր մորուքը, օծվեցավ և անուշահոտվեցավ: Նույն րոպեին պատրաստ էր նրա առջև ոսկյա գլխով զարդարած ղեյլանը, որից սառը ջուրը կաթկթում էր:

Այնուհետև մինը մյուսի ետևից ներկայացան իշխանի դրանիկները՝ նրա ֆերաշբաշին, նազիրը, մինախոռը, նայիբը և այլն: Նրանց ամեն մինի դեմքի վրա նկարված էր երկյուղ և ստրկական խոնարհություն: Նրանք, խորին կերպով գլուխ խոնարհեցնելով, երկրպագություն էին տալիս և ամեն մինը զեկուցում էր անում յուր գործավարության մասին իշխանի բացակայության ժամանակ:

Իշխանը մի քանիսին գովեց, մի քանիսին բարկացավ և հայհոյեց ու այնպես արձակեց բոլորին:

Ամենից վերջը հայտնվեցավ ծերունի ներքինապետը, երբ նրա տերը միայնակ ծխում էր:

Ի՞նչ ունես ասելու, հեյդար, դարձավ դեպի նա իշխանը: Ծերունին կրկնեց երկրպագութ յունը, պատասխանելով.

Թո՛ղ ողջ լինի իմ տերը և աստված նրան երկար կյանք պարգևե, թող նրա փառքն արեգակից վերև բարձրանա:

Ի՞նչպես է իմ հարեմխանան:

Ձեր աղախինները բոլորն առողջ են և աղոթարար յուրյանդ տիրոջ թանկագին կենաց համար:

Իշխանն ընդունեց ինքնաբավական կերպարանք, բայց Հեյդարի դեմքի վրա նկատում էր նա կասկածավոր մի երևույթ, որը ձերունին կարծես աշխատում էր թաքցնել:

Առանձին ոչի՛նչ չէ՞ պատահել, հարցրուց նա: Ձեր մեծության հովանավորության շնորհն, երբ յուր աղա խիններից պակասում է, անկարելի է, որ մի չարիք չհանդիպե տե՛ր իմ:

Իշխանի դեմքն այլայլվեցավ:

Ի՞նչ կա, շուտ ասա՛, ծերուկ, կոչեց նա մի փոքր բարկացոտ ձայնով:

Ներքինապետն, որ բոլոր մարմնով դողում էր և հազիվ էր կարողանում յուրյան ոտքի վրա պահել, ասաց.

Հարեմներից մինը տանջվում է ջիններից:

Հանուն գթած և ողորմած ալլահի...: Նզո՛վք շեյթանին.... բացականչեց իշխանը սարսափելով: Այդ ո՞րն է, անհամբերությամբ հարցրուց նա:

Գուրջիստանցի խանումը, տեր իմ:

Զեյնաբը: Նրա տե՞ղն է... պատասխանեց իշխանը լի բարկությամբ: Այդ կամակոր գյավուրի աղջիկը մի անդամ ևս յուր կյանքումն նամազ չէ արել: Նրա տե՞ղն է, թո՛ղ այժմ յուր անհավատության վարձը ստանա... թո՛ղ ջինները տանջեն նրան...

Ձեր ծառան հրավիրեց մի պառավ կին, տեր իմ, հառաջ տարավ ծերունին երկչոտ ձայնով: Նա զորավոր կախարդներից մինն է, նա իշխում է ոգիների վրա: Կախարդը մեծ մասամբ հալածեց ջիններին, այժմ խանումը փոքր-ինչ հանգիստ է:

Իշխանի վրդովմունքը մի փոքր հանդարտեց:

Գնա՛, Հեյդար, դու ասա Զեյնաբին ես ուզում եմ նրան տեսնել, հրամայեց նա:

Դժբախտաբար ձեր աղախինը չէ կարող վայելել յար տիրոջ մի այդպիսի շնորհը:

Ինչո՞ւ:

Կախարդը հրամայել է նրան յուր սենյակումը փակված՝ մնալ, մինչև քառասուն օր չիլա մտնել և ադամորդու երեսը չտեսնել: Այդ քառասուն օրումը խանումն յոթն անգամ ողորանը պետք է ծայրեիծայր կարդա և ամեն օր յոթն անգամ նամազ անե, մինչև չար ոգիները բոլորովին հեռանան նրանից:

Ուրեմն ես չե՞մ կարող տեսնել նրան:

Վտանգավոր է մտնել նրա մոտ, տե՛ր իմ:

Սույն միջոցին Զեյնաբ-խանումի բակից լսելի եղան զանազան սարսափելի ձայներ:

Լսեցեք, տեր իմ, լսեցե՛ք, ահա ջինները սկսեցին յուրյանց դիվական հարսանիքը: Իշխանի երեսի գույնը թռավ: Նա յուր մատներով սկսեց անհանգիստ կերպով

յուր «տերողորմյայի» հատիկները դարձնել և ալլահի ու մարգարեի անունները կարդալ:

Ձայները լռեցին, միայն երբեմն լսելի էր լինում սուր ձգական ճլվլոց:

Նույն ժամուն մանկահասակ սպասավորներից մինն իմացում տվավ, թե մի քանի խաներ և բեկեր ուզում էին ներկայանալ: Իշխանը հրամայեց, որ գան:

Դու կարող ես գնալ, Հեյդար, դարձավ նա դեպի ծերունին, միայն Բագիմ-խանումին հայտնիր, որ այս գիշեր նրա մոտ կլինեմ:

Ներքինապետը կրկին երկար կյանք և առողջություն բարեմաղթեց յուր տիրոջը և գլուխ տալով հեռացավ: Իշխանի դահլիճը մըտան խաները և բեկերն, որոնք կառավարության մեծամեծ պաշտոններ էին վարում և միևնույն ժամանակ ունեին բարեկամական հարաբերություններ նրա հետ: